Բայթյանն ընդդեմ Հայաստանի

(գանգատ թիվ 23459/03)

Մեծ պալատի 2011 թվականի հուլիսի 7-ի վճիռ

Կոնվենցիայի 9-րդ հոդված

Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետ

Կրոնի ազատության իրավունք

Կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվողի քրեական հետապնդում: *Արձանագրվել է խախտում:*

Փաստերը

Դիմումատուն «Եհովայի վկա» կրոնական կազմակերպության անդամ էր և զինվորական ծառայության համար ճանաչվել էր պիտանի: Նա տեղեկացրել էր իշխանություններին, որ ինքը, կրոնական համոզմունքներից ելնելով, հրաժարվում է զինվորական ծառայություն կատարելուց, բայց միաժամանակ պատրաստ է կատարել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն: 2001 թվականի մայիսին ստանալով զինվորական ծառայության անցնելու վերաբերյալ ծանուցագիր՝ դիմումատուն չէր ներկայացել և ժամանակավորապես լքել էր իր բնակարանը՝ վախենալով, որ իր նկատմամբ հարկադրանք կկիրառվի: Նա մեղադրվել էր ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու համար և դատապարտվել երկուսուկես տարվա ազատազրկման: Տաս և կես ամիս մնալով ազատազրկման մեջ՝ դիմումատուն պայմանական վաղաժամկետ ազատ էր արձակվել: Նշված ժամանակահատվածում Հայաստանում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվողների համար այլընտրանքային քաղաքացիական ծառայություն նախատեսող օրենք չկար:

Իրավունքը՝ Կոնվենցիայի 9-րդ հոդված

(ա) Կիրառելիությունը: Սա առաջին գործն է, որտեղ Եվրոպական դատարանը քննել է 9-րդ հոդվածի կիրառելությունը՝ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվողների նկատմամբ: Նախկինում Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը իր մի շարք որոշումներում հրաժարվել է կիրառել տվյալ հոդվածը վերոհիշյալ անձանց նկատմամբ՝ այն հիմնավորմամբ, որ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետը «հարկադիր աշխատանք» հասկացության շրջանակից բացառում է «զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է համարվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ կրոնական համոզմունքներից ելնելով, ցանկացած այլ բնույթի ծառայություն», հետևաբար պետությունները իրենց հայեցողությամբ կարող են ճանաչել կամ չճանաչել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Այսպիսով, այս հարցը չի ներառվել 9-րդ հոդվածի գործողության շրջանակներում, քանի որ նշված հոդվածը չի դիտվել որպես զինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքում պատասխանատվությունից խուսափելու երաշխավոր: Այնուամենայնիվ, 9-րդ հոդվածի նման մեկնաբանությունը արտացոլում էր այդ ժամանակ գերակշռող գաղափարները: Այդ ժամանակվանից ի վեր լրջագույն փոփոխություններ են տեղի ունեցել ինչպես միջազգային, այնպես էլ ԵԽ անդամ պետությունների ազգային իրավական համակարգերում: Դիմումատուի՝ 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների նկատմամբ միջամտության ժամանակ (2002-ից 2003 թվականներ), ԵԽ անդամ պետությունների շրջանում արդեն կոնսենսուս կար, և նրանց գերակշռող մեծամասնությունը ճանաչել էր կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Դիմումատուի ազատ արձակվելուց հետո ՀՀ-ն ևս ճանաչեց այդ իրավունքը: Այս իրավունքի ճանաչման անհրաժեշտությունը բազմիցս արտացոլվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի զեկույցներում, ինչպես նաև ԵԽ Նախարարների կոմիտեի և Խորհրդարանական վեհաժողովի՝ պետություններին ուղղված հանձնարարականներում: Հաշվի առնելով վերոգրյալը և <<կենդանի գործիք>> սկզբունքը՝ եվրոպական դատարանը մատնանշել է, որ

անհրաժեշտ և կանխատեսելի է փոփոխել 9-րդ հոդվածի մեկնաբանությունը, և որ այդ դրույթը այլևս չի կարող մեկնաբանվել Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի հետ զուգակցված: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի *travaux preparatoires*-ը վկայում է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետի միակ նպատակն է տալ <<պարտադիր կամ հարկադիր աշխատանք>> հասկացության բովանդակությունը, ինչը ոչ ճանաչում, ոչ էլ բացառում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Հետևաբար, այն չպետք է ունենա 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները սահմանափակող ազդեցություն: Ուստի, թեև 9-րդ հոդվածը ուղղակիորեն չի նախատեսում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, Եվրոպական դատարանը գտավ, որ զինվորական ծառայությունից հրաժարվելը, եթե դա պայմանավորված է եղել բանակում ծառայելու պարտականության և անձի խղճի կամ խորը և իրական կրոնական համոզմունքների միջև լուրջ և ծանրակշիռ հակասությամբ, հանգեցնում է համոզմունքի կամ հավատքի բավարար հիմնավորվածության, լրջության, հետևողականության և կարևորության՝ 9-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների ներգրավման համար: Ուստի 9-րդ հոդվածը կիրառելի է դիմումատուի գործի նկատմամբ:

(բ) Գործի ըստ էության քննությունը: Եվրոպական դատարանը գտել է, որ զորակոչին չներկայանալով՝ դիմումատուն արտահայտել է իր կրոնական համոզմունքները: Հետևաբար նրա դատապարտումը զորակոչից խուսափելու համար հանդիսանում է 9-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կրոնի արտահայտման ազատության իրավունքին միջամտություն: Չքննարկելով նշված միջամտության՝ օրենքով նախատեսված լինելու կամ իրավաչափ նպատակ հետապնդելու հարցերը Եվրոպական դատարանն անդրադարձել է նշված միջամտության համար պատասխանող պետության ունեցած հայեցողության սահմաններին: Դատարանը արձանագրել է, որ ԵԽ անդամ գրեթե բոլոր պետությունները ընդունել են զինվորական ծառայությանն այլընտրանքային տարբերակներ, և ցանկացած պետություն, որը չի արել դա, ունի հայեցողության նեղ սահմաններ և պետք է ցույց տա, որ միջամտությունը

«ճնշող սոցիալական կարիքի» արդյունք է: Քննարկվող շրջանում Հայաստանում գործող համակարգը քաղաքացիների վրա դնում էր մի պարտականություն, որը լուրջ հետևանքներ կարող էր առաջացնել կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար՝ չնախատեսելով կրոնական պատճառներից ելնելով որևէ բացառություն և սահմանելով պատիժ զինվորական ծառայությունից խուսափողների համար: Նման համակարգը արդարացի հավասարակշռություն չի ստեղծում հասարակական ընդհանուր շահերի և անհատական շահերի միջև: Ուստի դիմումատուի նկատմամբ պատժի կիրառումը այն դեպքում, երբ իր խղճի և համոզմունքների պահանջների կապակցությամբ որևէ զիջում նախատեսված չէ, չի կարող համարվել ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոց: Եվրոպական դատարանն այնուհետև նշել է, որ դիմումատուի հետապնդումը և դատապարտումը տեղի են ունեցել այն ժամանակ, երբ ՀՀ-ն արդեն իսկ պաշտոնապես պարտավորություն էր ստանձնել ԵԽ-ի առջև՝ անդամակցությունից որոշ ժամանակ անց ընդունել այլընտրանքային ծառայության մասին օրենք, ինչը իշխանությունները կատարեցին դիմումատուի դատապարտումից հետո մեկ տարվա ընթացքում: Այսպիսի հանգամանքներում դիմումատուի դատապարտումը, ինչն ուղղակիորեն հակասում է ի կատարումն ստանձնած միջազգային պարտավորությունների Հայաստանում իրականացվող բարեփոխումների և օրենսդրական փոփոխությունների պաշտոնական քաղաքականությանը, տեղի չի ունեցել «ճնշող սոցիալական կարիքի» արդյունքում: *Խախտում*

Եզրակացություն: Արձանագրվել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում՝ ձայների 16 կողմ մեկ դեմ հարաբերակցությամբ: